ՊԱՍՏՕՐԻ (ՔԱՀԱՆԱՑԻ) ՊԱՏՄՈՒԹԻՒՆ.

Հեռնադրութենից յետոյ շատ շուտ՝ ես ստացայ յաջորդութեան պաշտօն մէկ վայրենի կղզու վերայ՝ որ կպատկանէր Անգլիային։ Այս երկիրը առաւել սակաւ ծանօթ է գիտնական ճանապարհորդներին և առ հասարակ ամենքին՝ քան թէ Նեղոս գետը և Նորվեգիայի անտառները՝ Անգլիայի հետ դժուար հաղորդակցութեան պատճառով՝ (թէպէտ նա շատ հեռու չէր) և ամենատեսակ յարմարութիւններից զուրկ լինելով՝ մինչև նաև ամենավստահ գիտնական ճանապարհորդները հազիւ կհանդիպէին այնտեղ՝ այն ևս ամառը՝ սակայն նորա դիրքը անհամեմատ աւելի բանաստեղծական է քան թէ այն տեղերը՝ որոնք կգտնվին Անգլիայի ժայռոտ եզրների մօտ՝ և ծովը՝ որը կծփայ սորա ժայռերին՝ նոյնպէս կապտագոյն է ինչպէս և Նափոլիի ծովածոցին մէջ։ Չափազանց ախորժ տպաւորութիւն գործեցին ինձ վերայ նոր տեսարանները՝ լռութիւնը և միայնակեցութիւնը Լօնդօնի աղմկալի կեանքից՝ շատ հոգսերից՝ չափազանց աշխատութենից և ուսանողական վրդովեալ կեանքից յետոյ՝ այս պատճառով ես առանց վշտանալու մի հայեացք ձգելով իմ նոր ասպարէզիս վերայ՝ նայումէի շատ հեռու միանգամայն չկարողանալով ծովի ահագին տարածութեան վերայ գոնէ մի նշան տեսնել Ալբիոնի սարերի սպիտակ գագաթներից՝ ինչպէս գրողները առ հասարակ կանուանեն Անգլիայի եզրներին։ Ես առանձին բաղդ կհամարէի ինձ համար ունենալ այնպիսի վերատեսուչ՝ որի նմանը դժուար է գտնել ներկայ իշխանաւորների մէջ՝ նա այն անձներից էր՝ որ կփայլէր իւր հոգեկան ազնուութեամբ և ջերմեռանդ և ճշմարիտ քրիստոնէութեամբ՝ նա պարզ վարվող էր և բարեկամասէր՝ զուարճախօս՝ մի և նոյն ժամանակ չկասկածող թէ մի՛ գուցէ այդ ընթացքով իւր անձնական պատիւը և նշանակութիւնը վայր ձգէ։

Ինձ յանձնված բանաւոր հօտս շատ բազմագոյն էր՝ բնիկները փոքր էին զարգացած և օտարոտի բնաւորութիւն ունէին՝ միանգամայն իւրեանց հայրենի երկրին յարմարված էին՝ նոքա կխօսէին մի այլանդակ լեզուով և ոչ ոքի վնաս չէին հասուցանում։ Այստեղ կային մշակներ թէ ստրուկներից և թէ Հավաննայից՝ Այս տեղը ունի զարմանալի դիրք՝ կային նաև Սկոտացիներ՝ Իրլանդացիներ և ամեն տեսակ ազգերից բնակիչներ՝ ուղիղն ասած՝ բերդապահ զինուորներ և նաւաստիներ՝ հետևակ և ծովային զօրքերի աստիճանաւորներ՝ թէպէտ փոքր թուով՝ մանր կալուածատէրեր և մշակներ իւրեանց կանանց և զաւակների հետ։ Այս կղզին իւր բազմատեսակ բնակիչներով՝ քաղաքացու համար՝ ինչպէս որ մինչև ցայժմ ես էի՝ կներկայացնէ բաւականին ապշեցուցիչ տեսարան։ Վիթխարի ժայռերը իւրեանց գագաթները երեք հարիւր ոտնաչափ բարձրութենից յանդգնաբար խոնարհեցրել էին դէպ ի ծովը։ Կղզին երկու կողմից անմատչելի էի՝ միայն մեծ դժուարութեամբ կարող էր մօտենալ՝ որ և իցէ լեռնական՝ որ կարողանար մագլցելով բարձրանալ՝ այն ևս պարանի օգնութեամբ՝ այն ժամա-

նակ և ս այդ ձեռնարկութիւնը չափազանց վտանգաւոր կհամարվէր։ Եզրնե-
րի մօտ փոքր հեռաւորութեան վերայ կգտնվէին փոքրիկ խորշեր, որոնք
ձևացել էին ժայռերի խոռոչներից, որոնց մէջ կապտագոյն ալիքները, լու-
սափայլ փրփուրով պատած խորտակվումէին ժայռի պարիսպների վերայ,
միանման թմրեցուցիչ ձայնով, որի լսելը շատ ախորժելի է, մանաւանդ
ամառվան տաք եղանակին ճաշից յետոյ, մեկնվելով ժայռի գագաթին և
դանդաղ կերպով նայելով հեռու կապոյտ ծովին։

Միայն թէ այս տեղը չէր ներկայացնում գիւղական խաղաղ դրութեան
գեղեցկութիւնը, այստեղ կար մի անդունդ որ տեսնելուն պէս մար-
դը երկիւղից շնչասպառ էր լինում և գլուխը պտոյտ գալի։ Կային այս-
տեղ և ժայռեր, որոնք ցցուել էին ցրուած սարերի մէջ և որոնց ուխտա-
դրուժ գագաթների վերայ մինչ անգամ բաղէն չէր վստահանայ նստել,
իսկ նոցանից հարիւր ոտնաչափ ցած անդունդ, բայց գեղեցիկ ծովը եռու-
մէր ահագին հողակոշտների մէջ, որոնք թափվել էին լեռներից և ծածկը-
ված էին ծովային լորձիւնոտ բոյսերով, որոնց փայլուն կարմիր և կանաչ
գոյները պարզ որոշվումէին վերևից։ Այս ժայռերից շատերը բնիկներից
ստացան իւրեանց անունը, մասամբ կկարծեմ թէ հիմնվելով այն կանոնի
վերայ, թէ իւրաքանչիւր առարկայ պէտքէ ունենայ իւր անունը, մասամբ
և ս թէ կարելի է և այն պատճառով, որ հեշտութեամբ ճանաչվին և օգ-
տվին նոցանից ձկնորսութեան ժամանակ, կամ ուրիշ ծովային որ և իցէ
աշխատութեան միջոցին։

Ուրեմն այնտեղ երևումէր Տ=ՀԿ ֆ=ԳՈՆ, օտարոտի ձևով մի ժայռ,
որի գագաթը ներկայացնումէր մարդի նմանութիւն գլխարկով։ Յետոյ կար
դարձեալ ԱԳՈՆԱՅԻ ՅԵՆ, ժայռի նեղ ցցուած կտոր քսան ոտնաչափ երկայ-
նութեամբ սկսած ժայռի գագաթից և կախընկած մօտ երեք հարիւր ոտնա-
չափ փլատակի խորութեան վերայ, որ մինչև ծովը կձևացնէր ուղղաձիգ
պարիսպ առանց որ և իցէ ցցուած կտորի կամ ճեղքի։ Ժայռոտ եզրի այս
մասը բնիկներից ամենավտանգաւոր տեղը կհամարվէր, ամենավստահ անձ-
ներից և ոչ մէկը կվստահանար ցածանալ այս տեղից դէպ ի ծովը, այսպէս
գոնեա կպատմէին այն ժամանակ, երբ որ ես գնացի բնակելու այնտեղ։
Նոյն իսկ ԱԳՈՆԱՅԻ ՅԵՆ մօտ կգտնվի ուրիշ ժայռ, որ դուրս է ցցուած
տափարակ մակերևոյթի վերայ և կձևացնէր անկիւն մօտ քառասուն և հինգ
աստիճանի, նորա վերայ ստիպված կարող էին տեղաւորվիլ երկու մարդ,
այն և ս այն պայմանով, եթէ որ և իցէ կորիճ մարդ հնար գտնէր բարձ-
րանալու սարի այն վտանգաւոր տեղը։ Այս ժայռը կկոչվէր ԿՐՃՈՒՐԻ ԼԵՌ
և նորա հետ կապված էր տեղական աւանդութիւնը։

Հին ժամանակներում, երբ կղզու բնակիչները կաթոլիկ էին, մի կրօնաւոր
որ յայտնի էր իւր անպարկեշտութեամբ և զանազան յանցանքներով, իւր
վերայ շարժեց մէկ կալուածատիրոջ բարկութիւնը, որի քոյրը ընկել էր
նորա որոգայթի մէջ։ Թշուառ քրոջ եղբայրը տեսաւ նորան փոխադարձ
համաձայնութիւնից յետոյ, ինչպէս առասպելը կաւանդէ, ԿՐՃՈՒՐԻ ԼԵՌ

կոչված ժայռի վերայ։ Ցայտնի բան է խօսակցութիւնը անմիջապէս ստացաւ սաստիկ բարկութեան ձև։ որից յետոյ երիտասարդ կալուածատէրը կրօնաւորին վզից բռնեց և մենամարտութեան ժամանակ երկուսն ևս ընկան ժայռից թնդալով վերոյիշեալ ժայռի ցցուած կտորի վերայ։ Այստեղ։ աւանդութեանը նայելով։ ոսոխները մի միջոց նստած էին։ երկուսն ևս սարսափելով իւրեանց վտանգաւոր դրութենից։ բայց վշտացած եղբայրը նկատելով թէ փրկութեան ամեն ճանապարհը փակված է և բացի սորանից զայրացած իւր քրոջ ապաբաղդութեան վերայ։ կրկին յարձակվեցաւ կրօնաւորի վերայ և երկուսն ևս միասին ընկան ծովը։ որովհետև [illegible] իւր նեղ դրութեամբ նոցա համար մենամարտութեան ասպարէզ չէր կարող լինել։

Ես նպատակով այսպէս մանրամասնաբար նկարագրեցի այս ժայռերը։ որովհետև սոցա հետ սերտ կապված է իմ պատմութիւնը։ Վերև արդէն ես արտայայտեցի այն միտքը։ թէ բնիկները անկիրթ և անվնաս մարդիկ էին։ բայց ի հարկէ առանց բացառութեան կարող չէր լինել։ ինչպէս հոգևոր հովիւ։ ինձ դժուար չէր որոշել հօտի մութ ոչխարները և բաւական ճիշտ կերպով ծանօթանալ նոցա կենցաղավարութեան հետ։ Եւ այսպէս ես դեռ երկար միջոց չանցուցած այստեղ։ համոզվեցայ։ որ բնիկները պարապումն մաքսանենգութեամբ իւրեանց բարեկամների օգնութեամբ Ֆրանսիայի եզրների մօտ և ուրիշ տեղերում։ Թէպէտ մաքսանենգութեան պարապմունքը վերջին ժամանակներում այնքան օգուտ չէր խոստանում։ սակայն իմ նկարագրած երկրում։ արգելված ապրանքների մեծ վաճառականութիւն էր շարունակվում և սորա հետ կապված էին նենգաւոր միջոցների մութ զրոյցները։ Այս տեսակ կասկածները իմ վերայ անտանելի սարսափ էին ձգում և ես ինձանից կախված ամենայն հնար գործ էի դնում։ որ կարողանամ առ տեղեաւն։ նոյն իսկ չարագործութեան միջոցին որսալ նոցա։ Ցայտնի բան է։ որ ես չէի կարող այդ ձեռնարկութեան մէջ նպատակիս հասնել։ այնպիսի կտրիճներին որսալը դիւրին բան չէր։ և պատահմամբ եթէ որ և իցէ տեղ նոցա հանդիպէի։ իմ առաջ մի հեզ և խաղաղ ձկնորս կամ հողագործ էին ձևանում։ Այնու ամենայնիւ երեք կամ չորս մարդիկների վերայ հաստատ ուրիթ ունէի կասկածելու և հեռուից շարունակ դիտումէի նոցա ընթացքը։ Այս մարդիկն էին միջին տարիքով մի անձն։ որի անունն էր Բէօրլի և նորա երկու որդիները Ուիլիամ և Դիկ և մի յայտնի անպիտան Ալլէն Ուղրէօվ։ որին իւր ընկերակիցները կանուանէին սև Ալլէն։ չգիտեմ այն պատճառով։ որ նա սևագոյն էր և սևամազ։ թէ նորա մութ կենցաղավարութեան համար։ Ես փորձեցի իմ ամենատեսակ ազդեցութիւնը գործ դնել իմ հօտիս վերայ։ որ կարողանամ արգելել մաքսանենգութիւնը և այն բազմատեսակ չարագործութիւնները։ որ նոցա կվերագրէին։ Ցայտնի բան է սորա համար ես թէ իւրեանց և թէ իւրեանց բարեկամներին ատելի անձն դարձայ և թէպէտ նոքա ինձ հետ պատահելիս խոնարհութեամբ և քաղաքավարի կերպով կվարվէին։ բայց ես

դիտէի լուրերից՝ որ սոցա յարգելի միաբանութիւնը ինձ համարումէր մի չար և վտանգաւոր մարդ։

Մէկ մրրկալից գիշեր՝ նոր տարուց քանի մի միջոց յետոյ՝ ինձ հրաւիրեցին մէկ հիւանդ ծխական ժողովրդիս մօտ՝ որ կրնակէր քաղաքից չորս վերստ հեռաւորութեամբ՝ վայրենի և անապատ տեղում։ Ինձ երկար պահեցին հիւանդի մօտ՝ այնպէս որ հազիւ ինն ժամին կարողացայ ուղևորիլ դէպ ի տուն։ Ճանապարհը ամենևին ապահով չէր՝ մութն էր՝ մառը եթէ աչքի մօտ տանէիր չէր նշմարվի՝ իսկ նեղ անցքը գտնվումէր փշաբեր թուփերի մէջ այն ևս ափերի մօտով։ Ես լսեցի մեծ խորութենից ծովի սաստիկ մռնչիւն՝ ալիքը եզրներին մօտենալուն պէս առաւել սաստկանումէր ձայնը՝ և սաստիկ հողմից մինչև անգամ մեծ ալէկոծութիւն սկսեց ծովի վերայ։ Եւ պատահմամբ երբ ամպերը միմեանցից հեռանումէին և լոյսը ընկնումէր ծովի վերայ՝ ես միայն նկատումէի ինձ շրջապատող առարկաները և կարողանումէի միայն տեսնել սպիտակ փրփուր՝ որ շրջապատել էր ժայռի ստորոտը և նորանից փոքր ինչ հեռու նշմարվումէր կառուցած ծովի եռալը։ Թէպէտ ցերեկով լաւ ծանօթանալով տեղի դիրքին՝ կարողանումէի վստահ կերպով մագլել սարերի վերայ՝ որով մինչև անգամ առանձին համբաւ ստացայ բնիկների մէջ՝ բայց գիշերով մանաւանդ շատ մութ լինելով և մրրկալից եղանակին զարմանալի չէր՝ եթէ մոլորվէի ճանապարհից և չիմանայի իմ գտնված տեղս։ Հողմը սկսեց հետզհետէ սաստկանալ այն միջոցին՝ երբ ես հիւանդի տնից մեկնվեցայ և որովհետև ճանապարհին և ոչ մի մարդ չպատահեց՝ այս տեսակ մեռելութիւնը մի կողմից և ծովի կատաղութիւնն ևս միւս կողմից ինձ վերայ անմխիթար տպաւորութիւն գործեցին։ Եւ արագընթաց երթումէի դէպ ի առաջ՝ սկսեցի ինձ ոյժ տալ՝ որ շուտ հասնեմ տեղս և առանձին քաղցրութեամբ մտաբերումէի իմ վառարանը՝ այդ ժամանակ յանկարծ կրակ երևեցաւ հեռուից՝ ուշադրութիւնս գրաւվեցաւ և մինչև անգամ բոպէական երկիւղ ձգեց իմ վերայ։ Հետաքրքրութիւնս յաղթեց երկիւղին և սկսեցի մտածել թէ արդեօք այն կրակը ո՞ր տեղից պէտք է երևէր։ Շուտով հասկացայ՝ թէ այդ պէտք լինի ժայռի ստորոտի մօտ՝ կամ իմ գտնված տեղիս հակառակ կողմը՝ կամ թէ ժայռի ստորոտից ոչ շատ հեռու։ Կրակը բարձրանումէր մեծ բոցով և ձգումէր իւր լոյսը ծովի ալիքի վերայ մեծ տարածութեամբ։ Այս ի՞նչ պէտք լինէր։ Ի՞նչպէս կարող էին այս տեղում մարդիկ ցած իջնել և ի՞նչ նպատակով։

Բոպէական մտածութենից յետոյ հասկացայ՝ թէ այն կրակը մաքսանենգները վառած պէտք լինին՝ կամ՝ որ առաւել վատ է՝ նաև խորտակողները՝ այն նպատակով որ ծովի վերայ պատահած որ և իցէ թշուառ նաւը խաբվի տեսած կրակից և մօտենայ իւրեանց։ Ի զուր էի հեռու դիտում՝ որովհետև ոչինչ չէի կարողանում նշմարել։ Եւ հազիւ թէ երեսս դարձրի ծովից և կամեցայ շուտով հասնել քաղաք այն դիտաւորութեամբ՝ որ օգնութեան հրաւիրեմ քաղաքացիներին՝ նա մանաւանդ յայտնել մաք-

սատան նաւի աստիճանաւորներին, որ այդ միջոցում նաւահանգստում կգտնվէր, երբ յանկարծ զգացի, որ ինձ ձեռքակալում մի հզօր ձեռք և կոպիտ ձայնով լսեցի «ո՞վ կերթայ»։

Մի ակնթարթում շրջապատվեցայ երեք անձներից, որոնցից մէկը ձեռին լապտեր ունէր։ Նորա նուազ լոյսից 'որոշեցի, որ երեքն ևս զեղնագոյն վերարկու ունէին և նաւաստիների գլխարկ, իսկ նոցանից մէկին նըմանեցրի Ալլէն Ուդրէօֆին։

Այս մեր յաջորդն է, ասաց ինձ բռնողներից մէկը նայելով երեսիս։

Ես շտապեցի նոցա հաւատացնել, թէ նոքա արդարև ինձ ճանաչեցին և խնդրումէի շուտով ինձ արձակել։ Բայց այն մարդը, որին ես նմանեցրի Ալլէն Ուդրէօֆին, պատասխանեց կոպտաբար։

— Ոչ, ոչ, հայրիկ, գիտե՞ս շատ ցաւալի է։

Այնուհետև սկսեցին ինձանից գաղտնի խօսակցել և նոցանից երկուքը ինձ ձեռներիցս բռնած սկսեցին տանել, իսկ երրորդը ինձանից առաջ կերթար և ստիպեցին ինձ քանի մի քայլ երթալ այն նեղ անցքով, որով առաջուց ես ինքս կերթայի, յետոյ կանգնեցին և այն Ուդրէօֆ համարված անձը հանելով պարան սկսեց կապել վիզս և երկու ձեռներս։ Այն բոպէին միայն առաջին անգամ զգացի իմ վտանգաւոր դրութիւնս, որովհետև ընդհանրապէս խօսելով հոգևորական անձն իւր ժողովրդի մէջ կարող է ապահով համարվիլ։ Սակայն ես անվրդով կերպով հարցրի նոցա թէ ի՞նչ բանի վերայ են, չլինի թէ մոռացութիւն ունին ինձ սպանելու։

Նոքա կարճ պատասխանեցին թէ իմ կեանքս նոցա հարկաւոր չէ, բայց թէ ես իմանալով նոցա արհեստի վերայ շատ բան, այժմ ես չպէտք է տեսնեմ նոցա բեռները, որ այս գիշեր պէտք է ցամաք հանեն, որ ոչ ոքի չյայտնեմ։

Հարկաւոր է ասել, որ մաքսանենգութեան մասին այս տեղի օրէնքները շատ անորոշ և թոյլ էին, եթէ ապրանքը կամ նոյն իսկ մաքսանենգին առ տեղեաւն չբռնէիր, աւելորդ էր մինչ անգամ այդ մասին գործ սկսելը։

Այն երեք մարդիկը, որոնց ձեռին ես գտնվումէի, ինձ քաշեցին տարան դէպի անդունդը և ես նկատեցի, որ նոցանից մինը պարանի մի ծայրը կապումէր մի մեծ սպիտակ քարից, որ շատ խոր մտած էր հողի մէջ։

—Չլինի թէ դուք մոռացիր էք և ցանկանումէք ինձ այս ժայռից ցած իջեցնել, աղաղակեցի ես, երբ նկատեցի նոցա շարժմունքը։

—Արդարև նոյն այդ բանի մասին ենք այժմ խորհում, պատասխանեց մինը խնդալով։ Միայն հանդիստ նստիր և քեզ համար բաւական յարմար կլինի և եթէ դու կըլես, կարելի է քիչ միջոցից յետոյ դարձեալ քեզ բարձրացնենք։

Սառնասրտութեամբ կատարած չարութիւնը, որ իմ դէմս գործումէին, սարսափելի կերպով ազդեց ինձ վերայ, ես սկսեցի կատաղաբար ինձ պաշտպանել, բայց յայտնի բան է շուտով յաղթվեցայ։ Իմ ձեռնադրութենից առաջ ես համարվումէի բաւական հմուտ և յաջողակ հրացանաձիգ

և շատ ափսոսեցի որ հետս ատրճանակ չունէի, ապա թէ ոչ առանց յապաղելու ինձ մահ սպառնացողներին անմիջապէս կկոտորէի. Եւ ահա ժայռից ինձ իջեցրին ցած. Այժմ ես սարսափումեմ, երբ մտաբերումեմ այն րոպէն, երբ ինձ սաստիկ արագութեամբ իջեցնումէին պարանից կապված ժայռի գագաթից դէպի անդունդը և ոտներիս տակ չունէի ոչինչ նեցուկ. Ինձանից ցած գտնված մրրկալից ծովը ինձ շատ մօտիկ էր թւում և կարծումէի թէ իմ ջարդված մարմինս շուտով պիտի կլանէ իր ալիքների մէջ. Իջնելով ցած, մրրկից տատանվումէի պարանի վերայ և յուսահատութենից աշխատումէի լործինոտ քարերից պաշտպանութիւն գտնել, բայց նոքա ես ձեռս տանելուն պէս փշրվումէին. Այս՝ սարսափելի րոպէում կարծեմ թէ մահի ամէն տանջանքները կրեցի. Իբրև մի կայծ իմ կեանքիս ամէն իրողութիւնները մտքիցս անցան, դպրոցական կեանքս, հայրենական տունս, մօրս պատկերը և այս բոլոր յիշողութիւնները ինձ թմրեցրին և ծանր երազի ներգործութիւն ունեցան. գլուխս պտտումէր, թէպէտ և ոչ մի րոպէ իմ թէ ճանաչողութիւնս և թէ անձնապաշտպանութեան զգացմունքս չկորցրի և եթէ ես շուտով չհանդիպէի ժայռի ցցված կտորին, որով վերջ տրվեցաւ իմ չարչարանքներիս և օդային ճանապարհորդութեանս, գուցէ ես իսպառ զգացմունքից զրկվէի. Պարանը, որից ես կախված էի, բաւական ձիգ էր և ես տեսայ ինձ մի ժայռի ցցված կտորի վերայ, որ լուսնի աղօտ լոյսից որոշեցի, որ ես գտնվումեմ Սատանայէ յօնք կոչված սարի վերայ. Այժմ ես հասկացայ, թէ աքսորված եմ սաստիկ նեղ տարածութեան վերայ, ժայռի մի ցցված կտորի վերայ, որի տակը գտնվումէր մրրկալից ծովը. Այնուհետև դժուար չէր ինձ իմանալ թէ ի՞նչի համար մաքսանենգները իմ աքսորանքի համար այս տեղը ընտրեցին. Այս տեղից ես կարող չէի տեսնել, թէ ինչ է գործվում այն ծովածոցում, ուր որ կրակ էր վառված և նոցա համար առաւել օգտաւէտ էր իւրեանց ապրանքները տեղափոխել նշանակված տեղը առանց անկոչ վկայի ներկայութեան. Ես ինքս ինձ հարց էի առաջարկում, արդեօ՞ք դոքա չեն երկնչում պատասխանատուութենից այս՝ իմ չարչարանքիս համար. Մի՞թէ նոքա կարող էին այն մտադրութիւն ունենալ, որ իւրեանք իւրեանց ապրանքը նաւակների մէջ ամփոփելով հեռանան և ինձ այս կերպով յանձնեն իմ ճակատագրիս. Մօտիկ ապագաս յիշելուն պէս չափազանց սարսափումէի.

Ես գիտեմ, որ շատ երկար միջոց չմնացի առաջին դրութեանս մէջ, բայց ինձ թւումէր թէ շատ ժամեր են անցել, ինձ իջեցնելուց յետոյ. Գիշերը շատ մրրկալից էր և սաստիկ մթումէի, բայց միևնոյն ժամանակ երբէք չէի կարծում թէ ես այստեղ կարող էի կորչել. Ես նայեցի իմ կանգնած տեղիս, տեսայ որ նոյն իսկ ծայրին եմ կանգնած, և բոլորովին նեղ տեղ, ուր ոչ տեղն էր ինձ ներում շարժել և ոչ պարանի երկարութիւնը. Չգիտեմ նորանից էր, որ ես փոքր ինչ շարժեցայ, թէ ուրիշ պատճառից, բայց ես յանկարծ զգացի, որ պարանը շարժեցին,

չգիտեմ նայեցի վերը թէ ձայն տուի, ուղիղն ասած կարծեմ թէ օգնութեան կանչեցի, այն մտքով, կարծելով թէ պարանը կքաշեն դէպի իւրեանց։ Մէկ հայեացք բաւական էր, որ ինձ կախարդէին, այժմ պարզ մեկնեցի պարանի շարժումն. սպիտակ մեծ քարը, որի վերայ կապված էր պարանը, իւր տեղից շարժվեցաւ և փոքր առ փոքր սկսեց մօտենալ սարի ծայրին։ Անխուսափելի մահը այժմ արդէն աչքիս առաջն էր։ Եթէ քարը ընկնէր, որ անշուշտ պիտի պատահէր, նա կամ պէտք է ջարդէր ինձ և կամ թէ իւր ծանրութեամբ ինձ ևս պէտք է ձգէր ծովի տակ գտնված ժայռերի վերայ։ Ամպերը փոքր ինչ ցրվելով լուսնի լոյսով տեսայ, որ սպիտակ քարը սահումէր թաց հողի վերայ և թուեց թէ անդունդի ծայրին էր հասել և այլ ևս հնար չկար անշարժ մնալու և անմիջապէս պէտք է ընկնէր։ Ես ի՞նչ պիտի անէի։ Փրկութեան միակ ելքն էր պարան կտրելը, բայց այնուհետև ինչպէ՞ս պիտի ես մնայի զառ ի վայր թաց հողի վերայ առանց նեցուկի։ Այնուհետև ի՞նչպէս կարող էին ինձ փրկել։ Բայց երկար մտածել ինձ անկարելի էր, բոպէ առ բոպէ սպասումէի քարի ընկնելուն։ Գրպանիցս զրչահատը հանելով, նորանով սկսեցի ինձ ոյժ տալով պարանը կտրել, բայց այս գործողութիւնը շուտով կատարվելու չէր։ Երևի թէ ես յանկարծ պարանը քաշել եմ, սկսեցին վերևից մանր քարեր թափել, որ նշան էր մեծ քարի ընկնելուն, յանկարծ լսվեցաւ մի խուլ ճայթիւն, մի սպիտակ բան իմ առաջս փայլեց, պարանը կտրվեցաւ ինձ դէպի ինքն քաշելով և ես ընկայ ցած և անկարծիք ընկայ դէպի կորուստ։ Բայց ճակատագիրս այդպէս չէր որոշած. իմ ընկած ժամանակս ինձ պաշտպանել էր մի ցցված ժայռ, որ փոքր ինչ ցած էր կրծ---ոչ ---Ր--- կոչված ժայռից, ինչպէս վերջը երևեցաւ, և ես բացի մասնաւոր մի վէրքից անվնաս մնացի։ Այնտեղ ես աշխատեցի մագլցելով հասնել մինչև ժայռի մէկ ճեղքը, ուր ես կարողացայ ինձ պաշտպանել սաստիկ մրրկից և անմիջապէս իմ ուշքը գրաւեց ինձանից ցած գտնված տեսարանը. իմ նոր դիրքից ես տեսնումէի այն ամենայն գործողութիւնը, ինչ որ կատարվումէր ժայռի ստորոտում։ Կերոնների լոյսից, կարծեմ թէ կերոններ էին և լուսնի աղօտ լոյսից, ես կարողացայ որոշել քանի մի մարդիկներին, որոնք զարմանալի դէմք ունէին և ժողովված էին ծովեզրի մօտ գտնված փոքր ծովածոցին մօտ, որ գոյացել էր երկու ժայռերից։ Նոքա երբեմն մտնումէին ջուրը և երբեմն դուրս էին գալիս ափը, և սաստիկ զբաղած էին դանդաղ առարկաներ որսալով ջրի մէջ, որ հասնումէր նոցա, ջրի ընթացքով մի մութ և անորոշ տեղից, ջրի տակ գտնված ժայռերի եզրներից երբէք հարիւր կանգուն հեռաւորութենից։ Ես դողալով նկատեցի մութ տեղում մի նաւ, որից երբեմն բաժանվումէր մի սև առարկայ և ես բնազդմամբ գուշակումէի, որ ջրահեղձ մարդիկների մարմիններ պէտք լինէին։ Այս ամբողջ տեսարանի վերայ անդգայացած և ապշած կերպով էի նայում։ Ես մոռանումէի իմ անձնական վտանգն և երկիւղից, ցրտից և տկարութենից կիսամեռ դրութեան մէջ էի և իմ դրութիւնս ինձ երևումէր մի օ-

տարատի երաղ․ Յանկարծ այս երևոյթի մէջ մի առարկայ երևեցաւ․ սոցա նաւակը սաստիկ ալէկոծութենից տատանվելով հրուանդանի մօտով անցաւ և մօտեցաւ ափին։ Ջարդած նաւի կողոպտողները յանկարծ սկսեցին փախչել, այնուհետև կրակ երևեցաւ մաքսատան նաւից, այս նոր նաւը գալուն պէս ճանաչեցի, նորանից սկսեցին հրացան արձակել ափի մօտ գտնված մարդիկների վերայ։ Մեծ նաւից ցած իջեցրին փոքրիկ նաւակ, որը մեծ դժուարութեամբ մօտեցաւ ափին և սկսվեցաւ սարսափելի կռիւ, մութ գիշեր․ լսվում էր միայն նոցա աղաղակը և հրացանաձգութեան ձայնը։

Ես գրեթէ ուշաթափ ընկած էի ժայռի վերայ, երբ քամին ինձ մի ձայն հասցրեց, նա լսվում էր սարի գագաթից, այդ միջոցին փայլող կրակը վար էր իջնում՝ և շուտով նկատեցի, որ այն լապտեր էր և ես մի նշանաբան համարեցի։ Կէս ժամ անցած, ինձ մօտ վայր թողին պարան, որի ծայրից կապված էր օղակ, ես գտնելս կապելով օղակից զգացի որ ինձ բարձրացնում են։ Շատ շուտով ես հասայ ժայռի գագաթին Բ—րտ—ն ծովապետի (որ մաքսատան նաւի նաւապետն էր) և քանի մի անձների ներկայութեամբ, որոնց մէջ ես ճանաչեցի Գ․էլ Բ․օրլ․ն շղթայակապված, որի վերայ մաքսատան երկու ծառաներ պահապան էին կարգված։ Երբ նորան ժայռի ստորոտում կալանաւորել էին, նա հաղորդել էր իմ գրութեանս մասին և նա էր առաջնորդել իմ ազատողներին։ Մաքսանենգներից շատերը ծանր վիրաւորվել էին և երկուքը սպանվել, մէկը փախել էր, իսկ մնացածները դատաստանի ենթարկվեցան և վճռեցին նոցա աքսորել մինչև ի մահ արքունի հանքերում մշակելու։ Հրացանի առաջին հարուածից սպանվել էր Ա․լ․ն Օ—դր․ջը։

(Թ—րգմ․) Գ․ Վ․ Ս—ր․

ԼՕՆԴՕՆ․ (ԱՐԱՐԱՏ, № 3)։

Նկարագրենք սակաւ ինչ և Լօնդօնի ներքին տեսարանները։ Լօնդօնը բաղկանում էր 36 զանազան արուարձաններից, որոնք երբեմն բոլորովին բաժանված էին, իսկ այժմ այս բոլորը միացած, կազմում են մի ահագին քաղաք։ Սոցանից միայն մինն է կրում տիրապէս Լօնդօն քաղաքի անունը, այն է Սիտին (City of London)։ Սիտին, որ գտնվում է Տէմզայի ձախ ափին, համարվում է գլխաւոր վաճառատեղ և վաճառների համբարանոց։ Նա ոչ միայն կեդրոնն է Լօնդօնի վաճառականութեան, այլև Լօնդօնի հարստութեան գանձարան է։ Բաւական է միայն յիշել Սիտին, ածուխի, երկաթի, չուխայի, մի խօսքով բոլոր անգլիական ձեռակերտութեան մասին գաղափար կազմելու համար։ Ամեն ինչ այստեղ վեհ, գեղեցիկ և ահագին է, թէ շինութիւններ, թէ փողոցներ և թէ խռնութիւններ։ Սիտիի տների մեծ մասը շինված են սորանից հարիւր տարի և աւելի ա-